



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՏՈՔԹ. ՊԵՏՐՈՍ ԳԱՐԱՃՐՐԾԵԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑ



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տոքթ. Պետրոս Գարաճրրճեան Չորեքշաբթի, 2 Նոյեմբերի յետմիջօրէին այցելեց Ազգ. Առաջնորդարան եւ հիւրընկալուեցաւ Թեմիս բարեխման Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Տոքթ. Պ. Գարաճրրճեանի

կ'ընկերանար եղբայրը՝ ճարտարապետ Գեորգ Գարաճրրճեան, որ նմանապէս մեծ վաստակ ունի մեր ազգային կեանքին ու յատկապէս Կաթողիկոսութեան ծառայական ասպարեզներուն մէջ: Հանդիպումին մասնակցեցաւ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Ծորճ Չորպաճեան:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու եւ տեղեկութիւններ փոխանակելու մեր Թեմին ու Կաթողիկոսութեան գործակցական դաշտերուն մասին: Մասնաւորաբար վեր առնուեցաւ մեր Թեմին շնորհուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական այցելութիւնը եւ անով յատկանշուած հանգրուանը: Տոքթ. Պ. Գարաճրրճեան գոհունակութեամբ արտայայտուեցաւ իրագործումներուն մասին եւ յաջողութիւն մաղթեց Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ տարուող աշխատանքներուն:

Նկատի ունենալով, որ Տոքթ. Պ. Գարաճրրճեան առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Ազգ. Առաջնորդարան, Առաջնորդ Սրբազանը հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց Առաջնորդարանիս եկեղեցանուէր ու կրթական ծառայութեանց մասին, ապա նաեւ ծանօթացուց Առաջնորդարանիս աշխատանքի մարզերն ու բաժանմունքները:

Հրատեչտի պահուն, Առաջնորդ Սրբազանը խորհրդանշական յուշանուէրներ յանձնեց յարգելի հիւրերուն:

CENTRAL EXECUTIVE CHAIR DR. BEDROS KARAJERJIAN VISITS THE PRELACY



On Wednesday, November 2nd, 2011, Catholicosate Central Executive Chair Dr. Bedros Karajerjian visited the Prelacy where he met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Dr. Karajerjian was accompanied by his brother, architect Mr. Kevork Karajerjian, who is a long-time supporter of our community and specifically

the Catholicosate of Cilicia. Prelacy Executive Council Vice-Chair Mr. George Chorbajian participated in the meeting as well.

The discussion centered on the endeavors and collaborative efforts between the Catholicosate of Cilicia and the Prelacy, as well as the recent Pontifical Visit of His Holiness Catholicos Aram I to the Western United States. Dr. Karajerjian expressed satisfaction at the work being carried out at the Prelacy, and wished the Prelate and Prelacy success in future endeavors.

Given that it was Dr. Karajerjian's first visit to the Prelacy, the Prelate familiarized him with the various departments during a tour of the headquarters.

The Prelate presented mementos to both Dr. and Mr. Karajerjian at the conclusion of the visit.